ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
KOTAYK MARZ
MUNICIPALITY OF TSAKHKADZOR

2310 ք. Ծաղկաձոր Օրբելի Եղբ. 10 Tsakhkadzor city Orbeli Br.10
Հեռ.Tel.: (+374 223) 6-04-02, 6-04-03

*17 սեպտեմբեր 2015թ.* **N 251**

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Պետրոսյան**

Ձեզ եմ ներկայացնում Ծաղկաձոր համայնքի ավագանու 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 50, 51-Ն, 52, 53, 54-Ն, 55, 56, 57-Ն, 58, 59 և 60 որոշումները:

Առդիր՝ 14 էջ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատ.՝ Լեյլի Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ու Մ

**10 սեպտեմբեր 2015 թվականի թիվ 50**

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 08 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 84-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 13-ի թիվ 05 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3. Համայնքի սեփականություն համարվող կենցաղային սարքավորումները <<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման տրամադրելու մասին:
4. Ծաղկաձոր քաղաքի սեփականություն համարվող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը սահմանելու մասին:
5. Համայնքային սեփականություն համարվող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:
6. Համայնքային սեփականություն համարվող հողամասը Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման համաձայն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
7. Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
8. Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների համար հավելավճար սահմանելու մասին:
9. 2015 թվականի հոկտեմբերի 3-ին Ծաղկաձոր քաղաքի օրվան նվիրված միջոցառումները հրատապության կարգով կազմակերպելու մասին:
10. Հայդուկ Կայծակ Անդրեասի, բոլոր հայդուկների և Արցախի ազատամարտում զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված խաչքարի հրատապ ձեռքբերման և տեղադրման մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**10 սեպտեմբեր 2015 թվականի թիվ 51-Ն**

# ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 84-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձորի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 10-ի "Ծաղկաձոր քաղաքի 2015 թվականի բյուջեի հաստատման մասին" թիվ 84-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Բաժին1խումբ1դաս1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված4252 (Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում) "400.0 թիվը փոխարինել 300.0 թվով":

2) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված 4261 (Գրասենյակային նյութեր և հագուստ) "1213.8 թիվը փոխարինել 1053.8 թվով":

3 ) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում) հոդված 4264 (Տրանսպորտային նյութեր) "2800.0 թիվը փոխարինել 2600.0 թվով":

4) Բաժին 5 խումբ 6 դաս 1 (Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)) հոդված 4213 (Կոմունալ ծառայություններ) 600.0 թիվը փոխարինել 0.0 թվով":

5) Բաժին 6 խումբ 6 դաս 1 (Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) 0.0 թիվը փոխարինել 2000.0 թվով":

6) Բաժին 6 խումբ 6 դաս 1 (Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) 30000.0 թիվը փոխարինել 28000.0 թվով":

7) Բաժին 8 խումբ 1 դաս 1 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) "1616.0 թիվը փոխարինել 1116.0 թվով":

8) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) "1500.0 թիվը փոխարինել 2560.0 թվով":

9)  Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված 4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) “450.0 թիվը փոխարինել 1450.0 թվով":

10)  Բաժին 11 խումբ 1 դաս 2 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված 4891 (Պահուստային միջոցներ) “553.1 թիվը փոխարինել 53.1 թվով":

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական  հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**10 սեպտեմբեր 2015 թվականի թիվ 52**

## ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ԹԻՎ 05 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 13-ի "Ծաղկաձորի համայնքի 2015 թվականի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին" թիվ 05 որոշման հավելված 2-ի մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1. 12-րդ տողից հետո լրացնել հետևյալ տողը՝

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | «Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ | Թատերական խմբակի ղեկավար | | | 1 | 80000 | | 80000 |

2. «Ընդամենը» տողի «14» թիվը փոխարինել «15» թվով, «1125000» թիվը փոխարինել «1205000» թվով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**10 սեպտեմբեր 2015 թվականի թիվ 53**

## ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ <<ԾԱՂԿԱՁՈՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՄՇՏԱԿԱՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. <<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը մշտական անհատույց օգտագործման տրամադրել համայնքի սեփականություն համարվող հետևյալ կենցաղային սարքավորումները՝

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Քանակը | Միավորի արժեքը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1. | Գազօջախ | 1 | 240000 |
| 2. | Օդափոխիչ | 2 | 75000 |
| 3. | Սառնարան | 1 | 450000 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 սեպտեմբեր 2015 թվականի թիվ 54-Ն**

## ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Աճուրդային կարգով օտարել համայնքային սեփականություն համարվող հետևյալ հողամասերը՝

| Հողամասի հասցեն | Չափը | Նպատակային և գործառնական նշանակությունը | Կադաստրային ծածկագիր | Մեկնարկային գինը |
|---|---|---|---|---|
| ք.Ծաղկաձոր,Ավետիք Իսահակյան փակուղի, թիվ 19/6 | 0.075հա | հատուկ պահպանվող, հանգստի համար | 07-005-0021-0105 | 3393000 ՀՀ դրամ |
| ք. Ծաղկաձոր, Ավետիք Իսահակյան փակուղի, թիվ 19/5 | 0.075հա | հատուկ պահպանվող, հանգստի համար | 07-005-0021-0104 | 3393000 ՀՀ դրամ |
| ք. Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 6/8 | 0.2հա | հատուկ պահպանվող, հանգստի համար | 07-005-0023-0258 | 9048000 ՀՀ դրամ |

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ու Մ

**10 սեպտեմբեր 2015 թվականի թիվ 55**

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 8-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ուղղակի վաճառքով օտարել համայնքային սեփականություն համարվող հետևյալ հողամասերը՝

| N | Հողամասի հասցեն | Չափը | Նպատակային գործառնական նշանակությունը | Կադաստրային ծածկագիր | Վաճառքի գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | ք.Ծաղկաձոր,Տանձաղբյուրի փողոց թիվ 4/44 | 0.17հա | հատուկ պահպանվող, հանգստի համար | 07-005-0023-0225 | 7690800 ՀՀ դրամ |
| 2 | ք.Ծաղկաձոր,ԳՄՀ թաղամաս, թիվ 90/1 | 0.1447հա | հատուկ պահպանվող, հանգստի համար | 07-005-0026-0642 | 6546228 ՀՀ դրամ |
| 3 | ք.Ծաղկաձոր,Սարալանջի փողոց, թիվ 51 | 0.0866 հա | հատուկ պահպանվող, հանգստի համար | 07-005-0023-0221 | 3917784 ՀՀ դրամ |
| 4 | ք.Ծաղկաձոր, Սարալանջի փողոց, թիվ 51/1 | 0.0866հա | հատուկ պահպանվող, հանգստի համար | 07-005-0023-0220 | 3917784 ՀՀ դրամ |
| 5 | ք.Ծաղկաձոր, Սարալանջի փողոց թիվ 15/1 | 0.1հա | հատուկ պահպանվող, հանգստի համար | 07-005-0001-0024 | 4524000 ՀՀ դրամ |
| 6 | ք.Ծաղկաձոր, Մայիսյան փողոց թիվ 17/2 | 0.065հա | բնակավայրերի հասարակական կառուցապատման | 07-005-0008-0226 | 2940600 ՀՀ դրամ |
| 7 | ք.Ծաղկաձոր, Սարալանջի փողոց թիվ 6 | 0.062հա | հատուկ պահպանվող, հանգստի համար | 07-005-0002-0036 | 2804880 ՀՀ դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8 | ք.Ծաղկաձոր, Սարալանջի փողոց, 2-րդ փակուղի, թիվ 13 | 0.08հա | հատուկ պահպանվող, հանգստի համար | 07-005-0023-0060 | 3619200 ՀՀ դրամ |
| 9 | ք.Ծաղկաձոր,Օրբելի եղբայրների փողոց, թիվ 19/2 | 0.1 հա | հատուկ պահպանվող, հանգստի համար | 07-005-0025-0065 | 4524000 ՀՀ դրամ |
| 10 | ք.Ծաղկաձոր, Ամառանոցային փողոց, թիվ 5/1 | 0.1 հա | հատուկ պահպանվող, հանգստի համար | 07-005-0017-0030 | 4524000 ՀՀ դրամ |
| 11 | ք.Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 5/2 | 0.164 հա | հատուկ պահպանվող, հանգստի համար | 07-005-0024-0014 | 7419360 ՀՀ դրամ |
| 12 | ք.Ծաղկաձոր, Նոր թաղամաս, 4-րդ փողոց, թիվ 2 | 0.06հա | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 07-005-0016-0155 | 2714400 ՀՀ դրամ |
| 13 | ք.Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց թիվ 12/1 | 0.1հա | հատուկ պահպանվող հանգստի համար | 07-005-0023-0219 | 4524000 ՀՀ դրամ |
| 14 | ք.Ծաղկաձոր, Սարալանջի փողոց, 3-րդ փակուղի, թիվ 6 | 0.26հա | հատուկ պահպանվող հանգստի համար | 07-005-0023-0203 | 11762400 ՀՀ դրամ |
| 15 | ք.Ծաղկաձոր, Սարալանջի փողոց թիվ 78/2 | 0.1 հա | հատուկ պահպանվող հանգստի համար | 07-005-0022-0517 | 4524000 ՀՀ դրամ |
| 16 | ք.Ծաղկաձոր, Սարալանջի փողոց, 3-րդ փակուղի, թիվ 4 | 0.36 հա | հատուկ պահպանվող հանգստի համար | 07-005-0023-0204 | 16286400 ՀՀ դրամ |
| 17 | ք.Ծաղկաձոր, Իսահակյան փակուղի, թիվ 16 | 0.14 հա | հատուկ պահպանվող հանգստի համար | 07-005-0033-0003 | 6333600 ՀՀ դրամ |
| 18 | ք.Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, թիվ 60/1 | 0.16 հա | բնակավայրերի հասարակական կառուցապատման | 07-005-0020-0004 | 7238400 ՀՀ դրամ |
| 19 | ք.Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 6/2 | 0.095հա | հատուկ պահպանվող հանգստի համար | 07-005-0023-0228 | 4297800 ՀՀ դրամ |
| 20 | ք.Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց թիվ 24/1 | 0.1 հա | հատուկ պահպանվող հանգստի համար | 07-005-0023-0158 | 4524000 ՀՀ դրամ |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ Ու Մ

**10 սեպտեմբեր 2015 թվականի թիվ 56**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 66-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի ԹԻՎ 912-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ`

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Օտարել քաղաք Ծաղկաձոր, Ավետիք Իսահակյան փողոց թիվ 7/1 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման համար նախատեսված 0.0115 հա մակերեսով համայնքային սեփականություն համարվող հողամասը ուղղակի վաճառքով:
2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 520260 (հինգ հարյուր քսան հազար երկու հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ու Մ

**10 սեպտեմբեր 2015 թվականի թիվ 57-Ն**

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Նախադպրոցական ուսումնական կրթության դիմաց վճարը սահմանել ամսական 3000 դրամ՝ մեկ երեխայի համար:

2.Նույն ընտանիքից միաժամանակ մեկից ավելի երեխաների հաճախելու դեպքում երկրորդ և հաջորդ երեխաների համար վարձավճարը սահմանել ամսեկան 1500 դրամ:

3.Ծաղկաձոր քաղաքում հաշվառում չունեցող մեկ երեխայի համար Նախադպրոցական ուսումնական կրթության դիմաց վճարը սահմանել 8000 դրամ:

4.Արվեստի բնագավառում մատուցվող ծառայությունների դիմաց ամսական վճարը սահմանել `

1) դաշնամուրի ուսուցում 2500 դրամ,
2) վոկալի ուսուցում 2500 դրամ,
3) պարարվեստի ուսուցում 2000 դրամ,
4) թատերական արվեստի ուսուցում 2000 դրամ,
5) կերպարվեստի ուսուցում 1500 դրամ,
6)դիզայներության, կար ու ձևի ուսուցում 1000 դրամ:

5.Նույն ընտանիքից միաժամանակ մեկից ավելի երեխաների հաճախելու և (կամ)նույն երեխայի՝ մեկից ավելի խմբակներ հաճախելու դեպքում գանձման ենթակա վճարները զեղչվում են 50 տոկոսի չափով:

6. Ծաղկաձոր համայնքում հաշվառում չունեցող երեխաների համար սույն որոշման 4-րդ կետով սահմանված վճարների նկատմամբ կիրառել 1.5 գործակից:
7. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2010

թվականի դեկտեմբերի 15-ի «Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 35-Ն որոշումը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

---

**10 սեպտեմբեր 2015 թվականի թիվ 58**

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼ ՊԱՇՏՈՆԻ ԵՆԹԱԽՄԲԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասով և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանել հավելավճար 3%-ի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

---

**10 սեպտեմբեր 2015 թվականի թիվ 59**

## 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀՐԱՏԱՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. 2015 թվականի հոկտեմբերի 3-ին հրատապության կարգով կազմակերպել Ծաղկաձոր քաղաքի օրվան նվիրված միջոցառումներ:

2. Միջոցառումների կազմակերպման աշխատանքների կատարումը վերապահել աշխատակազմի գլխավոր մասնագետ Գերասիմ Մկրտչյանին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

---

**10 սեպտեմբեր 2015 թվականի թիվ 60**

ՀԱՅԴՈՒԿ ԿԱՅԾԱԿ ԱՆԴՐԵԱՍԻ, ԲՈԼՈՐ ՀԱՅԴՈՒԿՆԵՐԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԽԱՉՔԱՐԻ ՀՐԱՏԱՊ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Հրատապ ձեռք բերել և տեղադրել խաչքար՝նվիրված հայդուկ Կայծակ Անդրեասի, բոլոր հայդուկների և Արցախի ազատամարտում զոհված ազատամարտիկների հիշատակին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**